Գ. Փ.

№ 2

# ԳԱՂՋԻ ԲՈԽՉԷՔԸ

ԱՆԴՆԵՐՋԻ ՊՐԷՅՍԿՈՒՐԱՆՑՈՎ

№ 2-ի յաւելուածը

## ԳԻՒԼՈՒՄ-ԳԻՒԼՈՒՄ

ԿՈՒՊԼԷՏՆԵՐ

ԹԻՖԼԻՍ.

891.99
Բ-16

№ 2.

13 APR 2011

# ԲԱՂՔԻ ԲՕԽՉԷՔԸ

ԱՆԳԵՐՁԻ ԳՐԷՅՍԿՈՒՐԱՆՏՈՎ

*№ 2-ի յաւելուածը*

*«ԳԻՒԼՈՒՄ-ԳԻՒԼՈՒՄ»*

ԿՈՒՊԼԷՏՆԵՐ

ՎԵՐԱԾԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ
ՏԻԳՐԱՆ ՆԱԶԱՐՅԱՆԻՑ
18 ՆՈՅԵՄ. 1918 Թ, ԹԻՖԼԻՍ.
7/XI. 1922

Թիֆլիս — Տպարան «ԷՊՕԽԱ» — 1911 թ.

60263

29.08.20..
13 APR 2011

## ՆՈՐԻՑ ՄԻ ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

*յարգելի ընթերցողներին։*

*Տառասխալներով ու սխալ նախադասություններով լի առաջին գիրքը, որ այնքան շուտ և շատ ծախուեց, առանց լրագրներում յայտարարելու, առանց կանչելու և գաւառները ուղարկելու, կը նշանակէ հարկաւոր էր երկրորդ գրքի հրատարակելը։*

*Կարդացողներից և լսողներից շատ շատերը ասեցին են եղել—«Ես ու իմ Աստուծը դրուստ է գրած ու լաւ դուս բերած»։*

*Ահա դա մեզ խրախուսելով, շարունակում ենք գրել (հետն էլ գրել սովորել), յոյս ունենալով, որ սեպտեմբերին կունենանք և երրորդ գիրքը։*

*Երբ կը հարստանանք, սրբագրիչ էլ կունենանք։*

*Շուտով արէք, թէ ուզում էք երրորդ գրքի համը տեսնել։*

Գ. Փ.

## ԱԶՔԻՑՍ ՀԵՌՈՒ, ՍՐՏԻՍ ՄՕՏԻԿ,

## ՊԱՌԱՒ ԵՕՎԱՆԷ ՋԱՆ!

Շատ իմ շնուրակալ, վուր նամակս շուտ էիր կարդացի ու շուտ էլ ջուղաբ ղրգի։

Շնուրակալ իմ բարոնները համա ու իմ կողմից էլ բարովի հալ ու ախպալ հարցնողներիս՝ Արտալա Գէվօին, Աքլար Շուշանին, Գզիր Բէժօին, Գոնցխօպապին, Գարէծէլօին, Գուրջի Բէրօին, Ծօն-Ղազարին, Էրգէն Օսէփին, Էշ Գուրգէնին, Մուրտար Քեարիմին, Եաղլու ուտողին, Եավա Օսէփին, Բակլա Սարուխանին, Գմակ Օհանէզին, Դընգըռ Սօլօմանին, Եանշաղի տղին, Զօլ-գօլ Ստեփանին, Իշի կծած Աւետիքին, Ծուվի աքլարին, Զուռն Պօղոսին, Թխիս Ծիրուն, Իգիրմի Դօրդին, Իշի աքանդազին, Իշի Նօխտի տղուն, Լէհէնչու տղին, Հուրած Աւետիքին, Ծանճուրի տղին, Կէնճի Զուրաբին, Հացի Գէլուն, Կոպդ դըրատէ Մարիամին, Ծիպինին, Հացափուրին, Ծուլօ Պապին, Մոդնի Գէվօին, Ծիրվէծնի Սօլօմանին, Մասրա Գէվօին, Շաշ Աւաքին, Ջամչի Մէլքօին, Շալվար Պետրոսին, Շուռ Մօսէսին, Պրօշիկ Ակոփին, Ջանդակինց Թաթուլին,

Շաքօին, Ջոջոխեթին, Ջուջինի տղին, Պաճօ Սոլոմանին, Օս Միխակին, Պօլտի Յանուսին, Վիրիս Ջոխուն, Քիշմիշ Թամազին, Ջագինու տղին, Սուտ Քրիստոսին, Սատանայ Գէվօին, Օչխար Նօնիին, Քնթօ Ակոփին, Տօլմա ուտողին, Քեչա Եօվանին, Օխտ հաց ուտողին, Ուխտի Մղդսուն, Օզի գեալդուն ու ով գիտէ մեր բոլոր հին ու լաւ համսոններին։

Հա՛յ գիդի՛, մեր ընգեր պուրիքը, հարուփանէքը, տասը մի շահով ձուն, գըւանքէն մի աբասով խիգիլալէն, մեր կրծանիսը, օրթաճալէն, մեր կսանանց բաղի բաղմինչի նաճղ՝ապիէն, կո՛րա՛ւ-գնա՛ց, էլ ի՜նչ մնաց։

Կարդա՛ցի, վուր սիրտդ ցաւեցրիլ է իմ աղջըկերանց էտհանգի նամուսների կոտրիլը, էհ, Եօվանէ ջան, սաղ քաղաքը, վուր էդպէս ըլի, աղջիկս էլ ի՞նչ փայդա։

Հիմի պիտի իմանաս, իմ... ամա էլ ի՞նչ մենակ՝ իմ,— սաղ ջահէլների խաբարնիրը, վուր բերանդ ուելի բաց մնայ ու գըածներիս չըաւտաս։

Ամա դիփ միանա ո՞վ կանա պատմի նըրանց արարմունքը. էտու գրելու համա մէ վագոն— օխտըհարուր ու իցուն փութ թուղթ էլ չի հերիք, վուր ղըգիմ... էն էլ էտ դարիվերի վրայ ո՞վ պիտի բերի։

Մեր կնգիրքը մէ մինձ ղալմաղալ կու սարքէին, թէ կուխմանային, վուր դուսը մէ չարէք դիրգով գինի ինք խմի ու դարդը ախպուր տղին



հիդ տար։ Էն սաաթին էն կօսէին, թէ—կըանկ ննգնի Մամուլովի, Մելքոյի, Թաթոսի, Ծղալօքի ու Մճեդլովի դուքանը, կօսէ։

Հիմի՞...

Արա՛, հիմի տեհնին՝ ա՛յ. թող աչքերը բաց անին ու տեհնին թէ վուրդիին իրանց վուրթիքը ու վո՞ւնց ին խմում մեր փուղերը։

«Մօն-Պլիզէր», «Նատ կուրօխ», «Դրուժբա», «Էլդօրադօ», «Կիրակուզով», «Նովի սվէտ», «Անհօննա», «Աւրօրա», «Մօնտէ կարլօ» ու «Մեդվէդ», «Ամմա», «Միմօզա», «Գօրգիջանով» ու «Բագմվէտ», «Ֆունիկուլիօր», «Ապօլլօ», «Տիփ-Պուճուր», «Էդէմի», «Ֆանտազիա», «Աւտօնօմիա», «Բումինիա», «Էկօնօմիա»... հերիք է, ախպէր, վո՞ւր մէկը կօսիս։

Ի՞նչի՞ր է էստունքը։

Էս էնտեսակ տիղիր է, Եօվանէ ջան, վուր փուղով տուն կէհաս ու պարտքով դուս գուքաս, հալա մատնիքներդ ու սահաթդ էլ էնդի թողած։

Սարքած ունին բաղ ու բախչէքում բիսէտկէքը, մէջը սուլնիր, սցենի վրայ փօրտօպիան ու քամանչէքը, ման ին գալիս լաքիէքը, ածում ին, երգում ու քէփդ քոքում։

Պրիկաշչիկը իր սաղ շաբթուայ, չինովնիկը իր սաղ ամսուայ դաւածը, վաճառականը իր սաղ դախլը, դիփունքը տանում ին էնդի, դիփունքը էնդի ու մէկէլ օրը, պապիրոզի փուղը մէկմէկուց ին ուզում, չունքի փուղերը թողել ին

Ճինկի, Փչողի, բուչուղի, Թոխումի, Կիրակուզը-վի, Ձացանի տղի, Աթոի, Զոփուրի տղի, Մինաս-կի, Գրիշի, Մելքո Գորգիջանովի, Սամսոնի, Նա-սոնի մոտ, նրանք էլ էնէնց էին կպի, կարի ու ծծի ծուլբելի հանգը, էնպէս էին արնաքամ արի ջիբը, վուր մէ գրօշ էլ չէին թողի պախմելիի համա։

Աբա մէ մէկէլ օրը գնան փորցին ու մէ մա-նէթի բան նիսիա ուտին-խմին, կինծին տալով դուս կօնին։

Ախպէր, գրվանքէն մօթալը հինգ շահի ըլի, էս կի մէ կտուրին մէ աբասի տամ։

Միսը գրվանքէն իրեք շահի ըլի, էս կի էն-դի էրկու կտուր խորովածին, մէ-մէ հատ խակ ու հում բադրիջան ու պամադորին չուրս աբա-սի տամ։

Վարիկը մէ աբասի ըլի-մէ մանէթ տամ։

Գինին տասն ու իրեք կապէկ ըլի-իրեք ա-[illegible]ի տամ։

Մէ գրվանքա բալի ու ալուչուն-մէ մանէթ տամ։

Աստուծ չկայ... ու թէ Աստուծ չկայ, բաս խիղճ էլ չկայ։

Ամա չէ, շան գլուխը էստի ուրիշ տիղ է թաղած։

Դրուստ է. տանը եա քու բալկոնումը իրիգ-նահացը համ էժան կու նստի, համ համով կու-լի, համ կնիկդ ու էրէխեքդ կուտին, համ նա-մուսիրալով բէջդ կու կշտանայ... համա դէմու-



դէմը վուր տկլուր շանտոնէտկէք չիս ունենայ, կուպլետիստներ ու տանց անողնիր չիս ունենայ... Սեստրա գրէյին, վուր վուտնիրով զանգալակներ չի ածի; Բրինէտ Ալման ու Կօկէտկա Մարու-սիան, վուր բիւֆէտկումդ չին տուն գայ ու չին փաթթուի։

Այ, ինչով էս քիզ խափում, ինչով էս քիզ թամաշ անում, օցի հանգի շլինքիդ փաթթում ու փուղերդ անուշ անում։

Ցխօնէբուլին, վուր քիզ միամիտ քիչ փչա-ցած կատլետ եա ձու տայ, հազար ջէր կու բր-ղանիս ու պրօտակօլ կու գրիլ տաս, էնդի կի, վուր օրթունքոտ բան բերին, ձէն չիս հանում— աղջկիրք ու խալխ կան, ամութ է, ասում է։

Էս օր էսպէս, էլօր էսպէս—ինչկլի էփ... Էնդիան էլ վուտով եա կօնկով խօմ լայիղ չիս անում, բռնում իս լաւ աւտօմօբիլ եա թէ չէ մալակնի լաւ ֆայտօն ու դէ աբա, քշի նա վօգզուլ։

Հօպ-հօպ Վասկա, հօպ-հօպ Եագօրկա-պաշ-կա, Միտկա, Գրիշկա, պակասն էլ դրանք էն թամամ անում ու ջիբդ ռօվա անում։

Մէկէլ օրը, մէկ էլ կու տեհնիս, դուքնիդ ա-ռաջը շարուիլ էն արգանչիկ, ֆայտօնչի, զուռ-նաչի, դամբլիդար, լաքիա, ու մէկը էրկու արած ըշ-չոտ էն առաջ բերում։ Ռանգդ կորցնում իս, վա-խում էս խազէյինդ եա նաչալնիկդ չիմանայ, ա-ղաչում իս, վուր գնան ու իրիգնապահը ինքդ կու տանիս։

Արա, չոռ ուտէն էն լաւ չէ՞... սա քէփ է՞, թէ՞ իսպանախ է։

Ամա ո՞ւմը կու հասկացնիս։—Պտի մէ դուրբինդ ունենաս, էտեղան մտիկ տաս Մուշտէիդի աղաքը, եա Օրթաճալա ու Ելիզարովսկի քուչէքը, վուր տէնիս թէ, վունց ին խարաբ ըլում միր տղէրքը։

Խանդխուխան էլ, էն օյինի ին գալի, վուր սահաթնիրով օչէրէդի ին մնում—Բէքթաբէգովի, Աղաջանովի ու Մանդէնովի դուանը։

Թէլս կորցրի. էս չէր թողնինք, իժում կու գրիմ բիզ. հիմի միր հարուստ ջահիլների խաբարն էլ ասիմ քիզ։

Էլի Գօգլէն է, կոտէն է թէ Աբրամն է, էժան տիղ ին քէփ անում. ջահանդամը նրանց գլուխը... Բաս մինձամարդէ՞քը, գիդէ՞ս թէ ինչիր ին անում Միմօզա ու Գօրգիջանովի մօտ։

Կնիկը դաչումը կաւալէրների հիդ, մարդը էստի բաղումը, շանսոնետկէքի հիդ։

Կաբինէտ, աֆինսկի վեչեր, մանախօր, լիկիօր ու շամպանսկի, ցիպլիատա, ֆիլէյ ու պապօլսկի։

Կարում ին, կարում ին, հարուրանոցնիր է, վուր գնում է, հազարնիր է, վուր ծախսում է։

Խիղճ ու նամուսաւոր խալխի համա մէ Մուշտայիդ ունէինք, ախպէր, էնդի էլ աղջկերքով ու լըբութէնով լքցրեցին։

Հարուստնիր, փուղաւուրնիր... Ի՞նչ ին կոր-ցնում։ Հիշտ դադլում է, հիշտ էլ ուտում է։ Աւտաս, ստանօվկի ու պարավոզի առաջ քըտինք ին թափում, եա Քուռի ափին Սուլէկէնի բուրթ ին լանում-շոքումը, այ։

Արխէյին քէփ ին անում ու մնացածն էլ մաճէն յետոյ տղէրքն ու նասլէդնիկնիրն ին խժռում։

Վուր բիսէտկումը կուգիս մտիկ տու, մէ տիղ փլան հարուստի տղին կու տեհնիս, մէկէլ տիղը փստան հարուստի տղին, իրար ջիբը մտած շատ ին ծախսում, շատ քէ՛փ անում, վուր ինչէ լաւ աչքով էրևան գուքուած ու գըլուած, մախմուր ու ատլասնիր հագած բիվշի կուխարկէքին։

Գօրգիջանովն էլ ինչ վուրթի է, նրան Մելքօ կօսին։ Կալուչի բալկի պլաշկէքի ձեռին բալալայկէք ու գիտարէք է տալի,—զազրանիցի եա Պետերբուրխի «կապելլա» է, կօսէ։ Հարուստները ցանկցար տղերքն էլ, կանչում ին իրենց մօտ թաքուն, վուր Զասիպկինը չիմանայ ու «դուշկա ջան, չտօ խօչիշին» վիրջ չկայ։

Ի՞նչ ին հոգում, ի՞նչ դարդ ունին։ Հօր ֆաբրիկէքն ու զաւօդնիրը բանում ին, բանուորնիրն ու մշակնիրը քրտնում, փուղը գրով տալի, իրանք կի—къ чóрту..., շատ հարկաւուր է՞։

Խօսք օրինակի խաթրու ասա, էս քէփի, էս հարուրանոցների խուրդա անելու վուխտը, սրանց, վուր մօտենայ իրանց մէ պատռած, հարաքաթից ընգած, էրէխէքի տէր, քաղցած գուր-

ձաւուրը, մէ կապէկ չին տայ, վուր աչքը դնին։ Քօծը կի—մէ խօսք ասի, վիստաւկումը տասը հազարանուց բրօշկա հանի, առնում ին ու մէ կէլ օրը, ինչէ բեդամաղ չի, թանգագին բուկէտի հիդ թաւագա ին անում։

Իս պիտի ունենամ էտ միլիօնները, վուր էնէնց բարեգործութին անիմ, վուր սաղ աշխարքը արմընայ։ Վունց նատարիուս ու վուչ էլ տէրտէր. դիփ իմ ձեռով կու բաժնիմ ամենքին։

Ամա ով լաւ սիրտ ունէ, Եօվանէ ջան, խօմ գիդիս, վուր փուղ չի ունենայ։

Փուղը փուղի մօդ է գնում։

Ինչքան էլ, վուր մարդու փուղը շատանում, էնքան սիրտը քարանում է ու խանդիխան թէ մի բուչուխ, մի քանի հազարի բարեգործութին ին անում, անունը բանցրանում ու խալխը մինձ բան է կարծում։ Էտ էն է դուս գալի, վուր իս տաս թումանն ունենամ ու մէ կապէկ տամ Փէթխայինի դռանը նստած մէ աղքատին։

Քառասուն-իցուն միլիօն կարողութին ունեցող մարդը, վուր մէ միլիօնի վարձք անէ, քանի գրօշով իմ առնում։ Խօմ պիտի մեռնի, հիդը խօմ չպիտի տանի, տօ, մեռնելու էդնէն էլա լաւ անում թողնիմ քաղքումը։

Տեսա՞ր միր Դաւիթ Զախարիչ Սարաջովը, ինչ լաւ անդերձ թողից... շատ հարց ու բարով կօնիս, էտի լաւ պատիւ ունէք ու յօթիանա, համ էլ հարցրէք իրենից թէ՝ էն անդիրձումը, վուր



հարուր քսան ու հինգ հազարը բանուրներին է տւի... Աւճալսկի քուչի իր մէկէլ զաւօդը խօմ մէջն է։ Ի՞նչ անինք, վուր ռեկտիֆիկատ է, խօմ մինձ խաղէյինը ինքն էր։ Թող էտիան մի նամակ գրի իր դուշեպրիկաշչիկին, վուր նրանց էլ փայ տան անպաձառ. սա սուդօ բան չչինին, ամաւթ է։

Էն էի ասում։ Տօ, մէ մէ միլիօն, վուր պակաս մնայ վուրթկերանցս ու էտ փուղով խիղճ խալխին, խիղճ շկօլէքին ու խիղճ հնգրութիններին օգնիմ, ուփրօ լաւ չէ՞։

Շանսօնէտկէքը քիչ տանին չի ըլի՞։

Հազրէնց մէկը թէ կուլի, վուր վուրթին հօր փուղերով մարդավարի ապրի ու մարդութին բանացնի։

Շատերը ուփրօ քար ու փուչ ին անում ու հօր գեօռը ուշունց տալիս։

Հէնց էտու փքրումն էի, Եօվանէ ջան, վուր իմացայ Մարնէուլանց Ղազարի մահը։

Սա էլ էտթէնը էկաւ, թողից էստի զաւօդնիր, քարվասլէք, տնիր, կանտօրէք, մաղազիններ, տուն, տիղ ու նաղդ փուղէր։

Սաղ աշխարքը վուտի էլաւ նրա մահովը ու ամենքը մտում ին մինձ կտակի, ամենքը մինձ մէջօկնիր ին կարում, հոգեհանգիստնիր սարքում, պատկերնիր նխշում, ումիդ էլ ունիմ, վուր լաւ անդերձ թողնի. կենդանի վուխտն էլ օղորմատ էր, օղորմած հոգին։

Էնքան անդերձ անգերձ ասին, վուր իրի-

գուն էրազումս մտիկ թէ ինչ իմ տեհնում։

Միթամ, Ղազարը հոգևարք պառկած էր, նոտարիուսին կանչել էր, տէրտէրն էլ կողքին ու-ես էլ հիգը, չուրսով նստած էինք. Ղազարը ասում ու նոտարիուսը գրում էր։

Էրկու միլիօնը էսպէս պիտի բաժնուէր։

Կաւկազի հաուց բարեգործական ընկերութենին . . . . . . . . . 35,000 մանէթ

Կավկասում վուր պիտի համասլարան շինին . . . . . . . . . . . 100,000 »

Արհեստաւորաց շկօլին . . . . 10,000 »

Ներսիսեան շկօլի քեսիբ աշակերտներին . . . . . . . . . . . 25,000 »

Չար էրէխերանցը զրստող իսպրավիտելնի կալօնիային՝ Աւճալում վուր է . . . . . . . . . . . 10,000 »

Դրամատիկական ընկերութէնին, տասը տարի աբեզպեչենիա . . . . 50,000 »

Դրամատիկական ընկերութենի ֆոնդին . . . . . . . . . . . . . 100,000 »

Հարաքաթից ընգած (անկեալ) գերասանների օգնութեան ֆոնդին . 8,000 »

Զուբալովի թատրոնի հայոց սեկցիային . . . . . . . . . . . 8,000 »

Հաւլաբրի թատրոնի լաւ պաչինկի համա . . . . . . . . . . 4,000 »

Աւճալսկի աուդիտօրիային . . 2,000 »

Խարփուխում պիտի շինուի մի ժողովրդական աուդիտօրիա ու գրադա-



րան—հայերի, ռուսների, թուրքերի ու վրացիների համա . . . . . . . . . 25,000 »

Հաւլաբարի, կուկիի ու Նախալովկի գրադարաններին . . . . . . 3,000 »

Ձրի և էժանագին ճաշարանին . 10,000 »

«Մեղու» ընկերութենին . . . . 4,000 »

«Լոյս» ընկերութենին . . . . 5,000 »

Որբախնամ ընկերութենին . . 10,000 »

Կնիկների բարեգործական ընկերութենին . . . . . . . . . . . 10,000 »

Գրքեր հրատարակող ընկերութենին . . . . . . . . . . . . 10,000 »

Հայերէն դուս եկող գազեթներին լաւ բաներ գրելու համա . . . . . 30,000 »

Բոսերի ուսումնարանին . . . 10,000 »

Խեղճ աղչկերանց պսակելու համա 15,000 »

Կիրակնօրեայ ուսումնարանին . 5,000 »

Ժողովրդական համալսարանի ընդհանուր սեքցիային . . . . . . . . 10,000 »

Զուբալովի թատրոնի ռուսների կրուժոկին . . . . . . . . . . . 2,000 »

Զուբալովի թատրոնի վրացիների կրուժոկին . . . . . . . . . . 2,000 »

Զուբալովի թատրոնի ուրիշքի, թուրքերի, օսերի ու մալարօսների սեքցիաններին . . . . . . . . . . . 5,000 »

Զուբալովի թատրոնի մուզիկալնի կրուժոկին . . . . . . . . . 3,000 »

Իրեն-Զուբալովի թատրոնին . 10,000 »

Կավկազի վարժապետների միու-

Թէնին . . . . . . . . . . . . . . . 10,000 »

Բոլոր ծխական ուսումնարանների խեղճ աշակերտներին մուքթա ընդունելու համար . . . . . . . . . . . 25,000 »

Խուդոժեստվենի շկօլին . . . . . 2,000 »

Ջրում խեղդուողներին ազատող ընկերութեանն . . . . . . . . . . . 3,000 »

Վրաց մէջ գրագիտութիւն տարածող ընկերութեանն . . . . . . . 10,000 »

Վրաց դրամատիկական ընկերութեանն, լաւ պիէսներ գրողներին փէշքաշների համար . . . . . . . . . . 10,000 »

Մուսուլմանների բարեգործական ընկերութեանն . . . . . . . . . . 10,000 »

Փանգների շկօլին . . . . . . 5,000 »

Դէտսկի ու նաչլեժնի պրիւտին 10,000 »

Ամեն տարի, ապրիլի 30-ին մի վարդապետ, տասը քահանայ, տիրացուներին հոգեհանգիստ կատարելու, եկեղեցու և ուրիշ ծախսերի համար (տոկոսիքով) . . . . . . . . . . . 15,000 »

Տիրացուների ֆօնդին, շապիկներին և նրանց որդոց օգնութեան համար, հիւանդութեան եւ ուսումի ժամանակ . . . . . . . . . . . 20,000 »

Թիփլիզի խեղճ եկեղեցիների պաչինկէքի համար . . . . . . . . . . . 30,000 »

Սուրբ կուսանաց վանքին . . . 8,000 »

Թելէթի, Շաւնաբադի, Բօլնիսի, Ծիրանաւորի, Շինդիսի և Վաշլովանի



1001
4345

եկեղեցիների շինութեան պաչինկին, ուխտաւորների համար . . . . . . . . 20,000 »

Իր հիմիկուայ բանւորների որդոց ուսումի համար (տոկոսով) . . . . 30,000 »

Իր հիմիկուայ բանուորներին մէջ բաշ . . . . . . . . . . . . . . . . . 50,000 »

Իր կանտորի ծառայողներին, հաշւապահներին և այլն . . . . . . . . 200,000 »

Իր կանտորի գլաւնի հաշւապահներին, դիրեկտօրներին ու կառավարչին . . . . . . . . . . . . . . . 200,000 »

Ճեմարանի չքաւոր աշակերտների համար . . . . . . . . . . . . . . . 25,000 »

Կաւկազում օգտակար գիտելիքներ տարածող ընկերութեանն . . . . . 10,000 »

Բաղմնչինների շկօլին (սադօւնոտսկի) . . . . . . . . . . . . 5,000 »

Մի շինութիւն քաղաքում ջրով ու ամեն յարմարութեամբ, ուր պիտի ապրին պառաւած, բեզրած ու հարստութից ընկած հայոց գործիչները ու գրողները . . . . . . . . . . . . . 100,000 »

Ծննդեան ու Զատկի ճրագալոյցին խեղճ օջախներին բաժանելու համար (տոկոսիք) . . . . . . . . . 50,000 »

Արամեանցի, Միխայլովսկի ու Զուբալովի բալնիցում մի-մի կառավատի համար . . . . . . . . . . . 20,000 »

Իր քարվասլի, տների ու շինութիւնների պահապաններին, մշակներին ու դւօրնիկներին . . . . . . . . . . 15,000 »



7/XII-1922

Թիֆլիզի խեղճ ընտանիքներում մուքթա տանելու համար, երկու դոխտուրին, տօկօսիք . . . 50,000 »

Բաքւայ ուսումնարանների խեղճ աշակերտներին . . . 20,000 »

Բաքուի կուլտուրական միութենին . . . . . . . . . . . . . . . 20,000 »

Անտօն Մայիլովի ժուռնալին . 5,000 »

Բալախանումն էլ և քաղաքում իր անունով պիտի շինուի մի ժողովրդական աուդիտորիա . . . . . 25,000 »

Գայիանովի ու Օնանովի շկօլէքին 10,000

Գաւառական շկօլներին . . . 15,000 »

Ջէրջէրօբիթ (ներկայումս) պարապ մնացած խեղճ վարժապետներին 10,000 »

Վաճառականների շկօլին . . . . . 25,000

Խելագարների հիւանդանոցին . . 5,000 »

Առաջին-շտապ օգնութիւն հասնող ընկերութեանը . . . . . . . . 10,000 »

Աբասթումանում շինուող սանատօրիային . . . . . . . . . . . . . . 10,000 »

Խուլերի ու մունջերի շկօլին . 10,000

Գիմնազիաներում մի-մի որդեգիր պահելու համար . . 25,000 »

Տղաների գիմնազիային . . 20,000

Աղջկերանց գիմնազիային . . . . 20,000

Կանանց վիսշի կուրսերին . . 10,000 »

Կարմիր խաչի ընկերութեանը . . 5,000

Գրմից թաք կացող-ամանչկոտ



խեղճ օջախներին . . . . . . . . 25,000

Պաժարի վուխտից անօգնական ու խեղճացած ընտանիքներին . . . 15,000

Բանտարկեալներին ճաշ, Թաղելու տարեդարձին ու ազիզ օրերին, տօկոս 10,000

Անասուններին հովանավորող ընկերութեանը . . . . . . . . . 3,000

Կապէկանոց ընկերութեանը, քուչի տղերքի օգտին . . . . . . . . 10,000 »

Ռուսների «օբշեստվօ պօպեչենի օ դետիախ» . . . . . . . . . . 3,000

Խօջիվանքի, վերի ու կուկի գերեզմանատների պաչինկի, կարգի բերելու ու ծառեր տնկելու համար . 15,000 »

Գրաշարների ու լաւ արհեստաւորների կլուբի համար . . . . . . . 40,000 »

Ջհուդների բարեգործական ընկերութեանը . . . . . . . . . . . . 10,000 »

Աղջկերանց կար ու ձևի շկօլին . 10,000 »

Համքարութեան մէջ պարապ մնացած արհեստաւորներին մի-մի փոքրիկ արհեստանոցներ շինելու համար . . . . . . . . . . . . . . . 50,000 »

Մի մեծ վաճառատուն-ընկած ու խեղճացած անօգնականներին, որոնք առաջ, Միրզախանովի ու մէկէլների նման լաւ ապրուստին ունեցի . 100,000 »

Գիւղերի գրադարանների համար 5,000 »

Կտակ կազմողին էլ . . . . . . 5,000 »

Շատ հաւնեցի ու ուրախութենէս մի ծիծաղեցի. ծիծաղի ձէնից զարթեցի, տեսայ, վուր երազ էր։

Թուլուխչին գլխիս կաղնած ջրի փուղ էր ուզում։

Լաւ արդէրձ էր, իս ու իմ հոգին ու միր հարուստնիրը, վուր խիլք ունենան, դէփ Հապէս կու ժաժ գան։

Մնաս բարով, դօշաղ կացէք ու լաւ քէփ արէք. իս Նափի լաւ իմ ու չուտով էլի կու գըրիմ։

Խմուիմ իմ ձիր կինացը, սաղ ըլէք։

Չէքիմ Նիկօլի տղայ—ԳԷՎՕ

31 կոթաթվէ

Թիֆլիզ

## ԹԻԲԱԹՎԻ ՈՒ ԿԱԹԱԹՎԻ

### ԹԱԶԱ ԽԱԲԱՐՆԻՐԸ

Աղջկերքը ձկռաց իրանց շեապէքը փոխեցին ու հիմի ֆասերի հանգի կոլոր գդակնիր են ծածկում։

Երկու արշինանուց շամփուրնիրը ղայմացրած, երէգ երկու մարդու աչքիրը ծակեցին։ Մէկը օխտը երէխայ ունէր պահելու։

Միրանտուրօքին շատ ուխտաւորնիրը, իրանց աղջկերանց շեապի քորոցնիրով—բադրիջնով խորուած խորուեցին, վուր ժանգի համը չտայ։

—

Սուրբ Կարապետօքին երկու հարբած մջաւ հէյնիրը հայաթում կուխ սարքեցին, աղջկերքը փախչէլ չկանացին ու պպզեցին։

—

Փէփօն, Քեթօն ու Նատօն, գլուխնիրը դիգեցին, չունքի հէրը չիր թողի շանտեկլեր դնիրի կարիլն ու հագնիլը։

Կարգէթնիրը էրգարացրին, դէրիէքը կարճացրին։

—

Գիմնազիստնիրը խոստացիլ ին մէկուս մէկու, վուր էլ չարութին չանին ու խալխին չնիղացնին պրոժէկտորնիրում, Մուշտայիդում ու քուչէքում։

—

Խօրուելի առաջն առնելու համա—Դվարցովի փողոցը, Միխայլովսկի ու Գոլովինսկի պրասպէկտնիրը ջրում ին, մէ էրկու դուքան փէչատեցին ու էլ վախ չկայ։

—

Սեպտեմբերին եարսուն ցենզաւուր, վուր մի կապէկ նալոգի պարտք չունին, պիտի քաղքի համա, իրանց միջից, ջոգին քառսուն գլասնի։

—

Սօլօլակի խազէյինիրը շատ ին բարէխիրտ դառի։ Իրանց քսան ու մի տարուայ օղլուշաղաւուր պրիկաշչիկին չին թողի, վուր դուս գնայ.— մէտի մինձացիլինք, էլ ո՞ւր պիտի գնաս, ասում է։

—

Շահը յիդմէկանց պարօմով Պարսկաստան է էկի—ղալիոնս էտի մոռացայ, ասում է։

—



Գալավա Զերքեզովի գլխիզմանը տարւայ գլխին, հոգեհանգիստի խաթրու, աւլեցին ու ջրեցին։

—

Կլուբում տանց անելու վուխտը Մաթոյի չիքիլէն պատուից։

—

Գիդլիմ կուրախանաս, մաշինի սառուց էլ շինեցին։

—

Գազէթնիրը հիմի ուշ-ուշ ին կուռում, հագիւ օրէնը մի անգամ։

—

Ղամբարովը ու Ամիրջանովը աղջկիրանց էրէսի ներկիր ստացան բլօմա։

Կրասկէքի համա վէդրէք, թշերին քսելու չօտկիք—աչք ունքերի համա կարանդաշ մուգուզլնիր, գաջ, բէլիլա, սաժ ու ուրիշ բանիր։

Պարիկմախեր Սերօժէն էլ ստացաւ գլխի մազիր, կաւիք, մաւթուլնիր, մաշինկէք, կօսէր ու հազար տեսակ սարք ու կարք։

Սաբակա Սամսոնը ստացիլ է շատ բլօկիք, ստեկլեարուսէք, բուսիր, հուլունքնիր, աժուրնի չուլքիք, լենտիք, սակվօեաժներ, ու կարգէթնիր։

Վագզալ էլ մի վաղօն բամբակ է էկի աղջկիրանց դօշի ու տուրնուրի համա։

Դրամատիկական ընկերութեանը տւած է ընդունուելու համար 56, 763 խնդիրը։ Բադիբուդի ծախող Մամադը ուզում է փութով առնի ու տպրակնիր շինի։

—

Գարիկմախեր Սիսակը, չունքի բեղերը էժան է ածիլում, էս տարի վիր է կալի հարուր քասն ու վից մանէթ։ Էս հինգ հարուր եարասուն ածելածնիրը ցրւիլ ին քաղքի չուրս կուռը նիրկայացումնիր տալու։

—

Հալւաբրի կլուբի կուխնումը ճանջ ին գթի ու պօվերին զամեչանիա ին առի։

—

Երկու ամսումը կօնկի տակը ննգան—մենակ քառասուն ու օխտը մարդ։ Վատմանին իրիքմանէթ շտրաֆ նշանակեցին, նա ղաբուլ չկացաւ—գարադովը խօսացնում էր, ասում է։

—

Էս տարի դաչէքումը ոչ մէ կնիկ իր մարդուն չի դաւաճանէ, ասում ին։

—

Ձունքի վաղ է լուսանում տրամւայինէրը նշանակած ժամանակից էրկու սահաթով ուշ ին դուս գալիս ու վաղ տուն գնում։



Կրեդիտնիրի մեծանալու համա մէկը աւտոմոբիլ է բերի, վուր բանկի կանտավարչինիրին մառն ածի։

—

Գարադսկօյ լեչեբնիցէքում խիստ ակուրատնիութին է։ Ծառան քաղաքավարի է խօսում ու վարւում հիւանդնիրի հիդ, փերշալնիրը չին բղաւում, դօխտուրնիրը էրգար հարց ու փորց ին անում ու տնդղում, դիղը խօմ հինգ նիժաւտում հազիր ին անում։

—

Երկու ամսումը հարուր տասն ու իրիք գուքանչ է ծեծւի, իրիք հարուր վացուն մարդ ու կնիկ ին բաժնւի, չուրս հարուր թազա ծնւած էրէխայ ին դէն գցի ու չուրս հազար օխտը հարուր քասն ու ութ կնիկը զավուան է խմէ փուրը փչացնելու համա։

—

Հալւաբրիցը չուրս փանար պոկեցին, Միխայլովսկի քուչէն լուսաւուրելու համա։

—

Լադիժէն. Վէյնիրը ու Սակրօն քէաստւութին ունին։
Վանչխային խիստ խօդումն է։

—

Օսկերիչ Գեւորքի մօտ մի կնիկարմատ է եկել Սուրբ Գեւորքի շանն առնելու համար. Գեւորքը չի ունեցի ու Ղվթեքերի շանն է տւել: Կընիկարմատը մօտիկ է տւել ու ասի — վուրթի, ախար, Սուրբ Գեւորքը ձիով էր, ասում է:

— Չէ, դէդի, պատասխանել է Գեւորքը, ինչ գարին թանգացաւ ձին ծախից ու վուտով է ման գալիս, ասում է:

—

Նէժնի Մարօժնենց Անեաէն գանգատւիլ է տրամւայի դիրեկտօրին, վուր — վագօնը կարմունջի վրայ կանգնացրին ու սկվագնօյցը հիւանդացայ, ասում է:

—

Հիմի, վուր էսէնց ին, աւելի վուր շուքը ննգնի ինչ կուլիմ:

Գ. Փ.

—

# ՑԱԻԵԼՈՒԽԱԾ

—

## «ԳԻՒԼՈՒՄ—ԳԻՒԼՈՒՄ»

(Եղանակի համար պէտք է դիմել Մ. Եկմալեանին կամ Կարա-Մուրզային:

Գիւլում ջան, գիւլում ջան,
Ջան, գիւլում ջան, ջան
Գիւլում-գիւլում, գիւլում ջան,
Ջան ծաղիկ, ջան ջան:**—

—

Գիւլում, գիւլում, գիւլում ջան,
Ղօչաղ ենք էս բանում,
Երգ ենք երգում, բալա ջան,
Ժամանակ անց կացնում:

—

Կանտրաբանդ է ապրանքս
Ու փող եմ աշխատում,
Հանգում չարխած է բանս,
Ոչ մի հոգս չեմ քաշում:

---

**—Այս երկտողը պէտք է կրկնել ամեն կուպլետի վերջը:

Ես գիտեմ լաւ խաբել
Գժին թէ խելօքին,
Ու թէ վօ՞նց եմ փող դադել,
Ջեմ ասիլ ոչ մ՛քին։

—

«Հէյ Գաւիթ ջան, համեցիր,
Էժան ապրանք կուտամ»,
Քիչ վուր գլուխը եղեցիր,
Էն է դամբըղ ննգա՛ւ։

—

Մի գրվանքի տեղը տես,
Առաջ կէսը քաշես,
Յետոյ քիչ-քիչ աւելցնես,
Ինչ է քաշը խա՛ռնես։

—

Հաց թխողնիրը քաղքում,
Խօմ գիդիք, վուր շատ կան,
Հացում պրեմիա ին ղրգում
Կօճակ, թուկ ու տարակա՛ն։

—

Կրուժօկում մասկարադ է,
Կնիկս էնդի է գնացել,
Տեսնեմ ինչ որ ափիցրի
Մաչէն թեն է անցկացրել։

—



Երբ ետ եկաւ ու հարցրի.
Թէ ինչի է ուշացել,
Փաթաթւեցաւ ու ասմէ
—Մօրս մօտն էլի գնացել։

—

Աղջկերանց շլեապէքը,
Էս ինչ մոդա է քա՛,
Սաղ բաղի մօսաւալը
Վրէն—էլի տեղ կա՛յ։

—

Ես ժիվօպիսեց դասայ
Ու լաւ փող եմ դադում,
Օրը տաս վիվիսկի վրայ,
Ես բիվշիք եմ գրում։

—

Ազգանունս գրել չէմ գիդի.
Բանկումը կի չէն իմ,
Թէ վուր ռուսերէն բան հարցնին.
Դիփ ասում իմ—զա՛բուլ իմ։

—

Դռների վրայ ինչ է գրած,
Կարդացի էս տարի.
Բաղքի կէսը, Տէր իմ Աստուած,
Զուբնոյ վրաչ է դա՛ռի։

—

Օբշչեստվօ տրեզվօստի
Ժողով է էս տարի,
Ներս գնալիս քիթդ բռնի
Հոտ է Շիրաջխանի։

—

Դումումը ժողով է,
Գարագսկոյ ուպրավի,
Գլասնիքը փայտոնով
Գողէնքնիր են տանի։

—

Մէկին նամակ են գրում,
Հազար թուման են ուզում,
Վիրջը հինգ ու տաս շահով
Բանը քուլթան են անում։

—

Լոտօն ու կարտը շատցաւ,
Ու իմ բանս փչացաւ,
Պղինձն ու քափկիր գրաւ դրած,
Կնիկս ղօմարբազացաւ։

—

Տորս պատռած, գլուխս ջարդած,
Ոտքս ու ձեռս դուրս ընկած,
Ֆայտօն բերէք, եկէք-տարէք
Սկետինգ րինկումն եմ ընգած։

—



Թազա մոդնի դէրին,
Ինչ խոփած իմքին է,
Թէ վուր մի տեղ կռիւ ընգնի,
Փախչիլը չարթը չէ։

—

Քուցը ջուր խմելը
—Строгъ воспрещается
Կրանտից դորտեր դուրս գալը
—Чтожъ' очищается'։

—

Մետրիկէն չը վերկալած,
Դերասան են դառնում,
Ջուրցս նոր դուս եկած,
Կուպլետներ եմ գրում։

—

Կարդացողս դաթրից,
Ասմէ—պրծի, լաւ է,
Վատ բան պէտք է ասէի,
Ամա—«ղասվիդանի է»։

Գ. Փ.

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А. Публичная Библиотека
7/XI-1922
имени А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ՀՀ Ազգային գրադարան
NL0369931

ԳԻՆՆ Է ՄԻ ՇԱՀԻ.

# 2 Կ.

Դիմել հայ գրավաճառներին, Գ. Փիրումեանին և հրատարակիչ Սարգիս Տ[illegible]եանցին (Барятинская № 6, магазинъ Х. Германа).